*ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌԻՆ

*Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ՎԵՀԱՐԱՆ*

Ի՜նչ վատ է, որ կարող էինք ավելի լավը լինել և չե՛նք, և ի՜նչ լավ է, որ կարող էինք և չլինել և ե՛նք: Ի՜նչ վատ է, որ Հայոց երկհազարամյա պատմության մեր քարավանը չի գալիս Հայոց արքաների իրարահաջորդ կյանքերի ու գործերի ազդեցմամբ, բայց և ի՜նչ մխիթարիչ է, որ այդ պատմությունը մի անընդմեջ երթ է դառնում Հայոց հարյուր երեսուներկու - Հայոց մեր մեջ անպատկերացնելի մի թիվ - հա՛ր - յուր - և - րե - սուն - եր - կո՛ւ - Վեհի տիրական մաքառումով ու բազում առաքինությամբ և նույնքան էլ բեկումով ու վհատությամբ, բայց երբե՛ք ինքնուրացմամբ, որ ազգուրացում ու այսօրվա մեջ մեր երկրի ու մարդու չգոյություն էր նշանակելու:

Մեր այս արյունոտ մղձավանջի ժամին դժվար ուրախությամբ ուրախանալով Վեհիդ արժանավոր հայտնությամբ պայծառամիտ ու քաջակորով նախնիներիդ գահին, հանուն մեր ամենքիս և հանուն Քեզ երբեք չցանկալով, որ, Աստված մի արասցե, Քո տառապյալ նախնիներից շատերի նման մեն ու միակ դիմադարձողը մնաս մեր բոլոր պատուհասների,- հայ գրողների Քո համայնքը լիահույս է, որ իշխանական միտքդ պայծառ, քայլդ վստահ և աջդ կորովի է լինելու - գավազանդ խփելու ես Արարատյան այս սուրբ հողին, և գավազանդ հիմնասյուն է դառնալու մեր բոլորիս հայրենի տան, որ լույս ու ջերմություն, սեր ու վստահություն է հորդելու, որ վանելու, քշելու է կարմիր մղձավանջի այս ժամը իրենից հեռու, հեռու:

10 նոյեմբերի 1999 թ.